թափի սարի մէջ։ Բէօռաց, ասաց. «Շի՛ւտ արէք»։ Ինքն ընկեաւ Սանասարի ականջ, տիւռ պաց արեց, տեսաւ մէկ քեանի մարթ թուրերով կայներ էն սարի մէջ։

66. Ասաց.—Ի՞նչ մարթ էք։

Մէրը ծածուկ ազաչեց ու ասաց.—Ցըմ տղէներին չասէք, թէ էկիր ենք, ծեր վիզ տը կտրեյնք։ Ցըմ տղէներ տանից տիւս խանենք, Ջալատըմ կայնի էն կող, մէկ էն կող, զանեն յըմ տղի վիզն թռուցեն, որ նա չը տեսնայ, վախենայ։ Ապա առաչ ձի ըսպանեյք, նոր յըմ տղերք։

67. Ջալատն ասաց.—Դէ՛, իլի էրթանք, արուն չը թափի սարի մէջ։

Սանասար ասաց.—Մարէ, դո՞ր տ՝էրթայք։

—Մէյհ տ՝էրթայնք տիւս, տ՝ելեայնք։

68. —Մարէ ձի ասա, չուր յէս օր տիւ պռնաւոր էր, յէս օր մէկ պան կայ, որ քեզ կը տանեն։

Մէրը չուզեց ասել։ Սանասարը չը թողեց էրթայ, ասաց. «Մէ պան կայ ըստայ, որ ձի չըս ասի»։

69. Մօրը որտին տիպաւ, ասաց.—Ո՛րտի, որ ըռաստ[1] կուզես, իսոնք թակեաւոր յիւրօխկէ, որ մեր վիզ կտրեն։

Ասաց.—Կտրող վո՞վ ա։

—Էս Ջալատներ.

Մօտխոցաւ Ջալատին, ըէօռալէօվ ասաց.—Տի՛ւ յիմ վիզ տը կտրես։

Ջալատ ասաց.—Թակեաւոր ի հրաման տուած, որ ծեր վիզ տը կտրեմ։

70. Սանասար մէկ սիլայ[2] կպցրեց Ջալատի երեսին, կլէօխը թռաւ, Ջանտակ մնաց կայնուկ. մէկելներ որ տեսան, թողին փախան, կեացին թակեաւորին ասին.—Փիւ թոռ մէ սիլայ էղար Ջալատին, կլէօխ թռաւ։

Թակեաւոր ասկեար[3] յէօրէօխկեց ինոնց վերէն կռիւ։

71. Սանասար տեսաւ, որ ասկեար էկաւ կռիւ անելու, ասաց.—Ա՛խպէր, մեյնք ընչո՞վ կռուեյնք։

Բաղտասար ասաց.—Զէ՛ պապին կռիւ անելու պան տուեց մե։

Ասաց.—Ախպէր ինոր անուններ մեր մտէն կեացէ։

—Սա՛նասար, չէ՛ տիւ կրեր էս։ Պե կարտայ, ինոր անուն-ներ չը մոռնանք։

72. Սանասար ասաց —Ախպէր, տի՛ւ իլի, քիչ կռիւ արա՛,

---

1. Ճշմարիտն։ 2. Ապտակ։ 3. Զօրք։